# Սիմպտոմներ.

Տայր հարցումներ ու այլ գրառումներ

Наринэ Абгарян

# Манюня,

## юбилей Ба и прочие треволнения

РОМАН

Книга третья

Նարինե Աբգարյան

# Սանդուկյան.

## Տայի հորելյանն ու այլ պատմվածքներ

ՎԵՊ

Գիրք երրորդ

Թարգմանությունը ռուսերենից՝
Նարինե Գիժլարյանի

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 821.161.1-31 Աբգարյան
ԳՄԴ 84(2=411.2)-44
Ա 128

Ա 128 Աբգարյան Նարինե
Մանյունյան, Տայի հոբելյանն ու այլ տագնապներ: Վեպ / Ն. Աբգարյան;
Թարգմանությունը ռուսերենից՝ Ն. Գիժլարյանի.- Եր.: Newmag, 2023.
Գիրք երրորդ.- 292 էջ:

Ահա նոր և, հեղինակի խոսքով, հաստատ վերջին գիրքը՝ Մանյունյայի, Նառայի և փոքրիկ Բերդի մյուս հրաշալի բնակիչների արկածների մասին: Շտապեք տեսնել: Եվ կարդալ: Մանյունյայի ու նրա ընկերուհի Նառայի կյանքում ամպի չափ հոգս կա. պիտի հասցնեն չարաճճիություններ անել ու բոլորի կյանքն ուտել: Առանց դրա ի՞նչ մանկություն: Միայն թե Մանյունյան իսկական փոթորիկ է: Ինչ սկսեն ընկերուհիները, կվերածի հերթական ցունամիի: Անընդհատ շիլաշփոթի մեջ հայտնվող հարազատների ու Տայի անսովոր կոլորիտն էլ չի թողնի ձանձրույթից հորանջել:

ՀՏԴ 821.161.1-31 Աբգարյան
ԳՄԴ 84(2=411.2)-44

Գլխավոր գործընկեր
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
www.ena.am

ISBN 978-9939-884-64-6
Манюня, юбилей Ба и прочие треволнения
First published in the Russian language by Astrel imprint, St Petersburg, Russia
© Narine Abgaryan, 2012
© Newmag, 2023
Նարինե Աբգարյան «Մանյունյան, Տայի հոբելյանն ու այլ տագնապներ» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության ու հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են «Օրակուլ» և Newmag ընկերություններին: Համաձայն կնքված պայմանագրի՝ «Օրակուլ» հրատարակչության գրքերը ներկայացված են որպես Newmag ընկերության «Օրակուլ» հայ-ռուսական մատենաշար: Գրքի հայերեն թարգմանության և հրատարակման իրավունքները ձեռք են բերվել Banke, Goumen & Smirnova Literary Agency ընկերության հետ կնքած պայմանագրով:

# Բովանդակություն

Գործող անձինք ..... 7

*Գլուխ 1* Մանյունյան՝ գիտությունների մագիստրոս,
կամ ինչպես սովորական գոտկացավը պատժից ազատեց ..... 9

*Գլուխ 2* Մանյունյան ելույթ է ունենում հաշվետու համերգում,
կամ բարձունքից վախը բուժելու ինքնօրինակ միջոց ..... 23

*Գլուխ 3* Մանյունյան, ժողովրդական արհեստներն
ու մնացած հոգսաշատ գործերը ..... 39

*Գլուխ 4* Մանյունյան, շրջանային մասշտաբի արտակարգ
իրավիճակը և այլ տենդագին պատրաստություններ
Տայի հոբելյանի առթիվ ..... 53

*Գլուխ 5* Մանյունյան կամ բաղնիքի օրը և այլևայլ սին տագնապներ .... 67

*Գլուխ 6* Տան ծնունդ է անում, կամ Ժմայլիկ անվանյալ Ֆայայի այցը ..... 81

*Գլուխ 7* Մանյունյան տոնում է Մայիսի 1-ը ..... 95

*Գլուխ 8* Մանյունյան կերաման է սարքում ..... 115

*Գլուխ 9* Մանյունյան, «գլիասե» կոկտեյլը,
փոմփոլիկներն ու այլ աղջկական գործեր ..... 133

*Գլուխ 10* Մանյունյան պատրաստվում է մոսկվացի անծանոթուհու հետ հանդիպմանը, կամ մեր Կարինեի ուսադիրները ..... 149

*Գլուխ 11* Մանյունյան օգնության է շտապում, կամ Նվեր Կիրա մորաքրոջ համար ..... 173

*Գլուխ 12* Մանյունյան, կամ ինչպես էր Միշա քեռին ռոմանտիկ երթուղիները ճահճուտներով անցկացնում..... 191

*Գլուխ 13* Մանյունյան գնում է զբոսախնջույքի, կամ Համբո պապը, Սառա տատիկն ու մնացյալ պայթյունավտանգ տոհմածառը ..... 213

*Գլուխ 14* Մանյունյան դուրս է գալիս տանիք՝ զբոսանքի, կամ Զաբել տատիկի առնետաթերապիան ..... 231

*Գլուխ 15* Մանյունյան մեկնում է Կիրովաբադ..... 247

*Գլուխ 16* Մնաս բարով, Կիրովաբա՛դ, մնաս բարով ..... 259

*Գլուխ 17* Մանյունյան տոնում է Նոր տարին, կամ Տան ոգի մարդուկի երջանկությունը ..... 279

Հեղինակի վերջաբանը..... 288

## Գործող անձինք

**Շաց գերդաստան**

Տա, այլ կերպ ասած, Ռոզա Իոսիֆովնա Շաց: Էստեղ վերջակետ եմ դնում ու դողում:

Միշա քեռի, Տայի որդին և միաժամանակ Մանյունյայի հայրը: Միայնակ է ու անկոտրում: Նրբին հոգով կնամեծար: Նույնքան էլ միասեր: Ընդունակ է համատեղելու անհամատեղելին: Հավատարիմ ընկեր է:

Մանյունյա, Տայի թոռնուհին ու Միշա քեռու աղջիկը: Գլխին տնկված քյաքյուլով, տեղով մի տարերային աղետ: Հնարամիտ է, ծիծաղկոտ ու բարի: Սիրահարվում է մեռնելու աստիճան: Մինչև գլուխը չուտի, հանգըստացողը չի:

Վասյա, երբեմն Վասիդիս, էությամբ ամենագնաց ԳԱԶ-69 է: Արտաքնապես հավանոց է անիվների վրա: Էշի պես համառ է, քմահաճ: Տնաշենի մեկը: Կանանց ակնհայտորեն համարում է անտրոպոգենեզի թերաճ երևույթ: Խորշանքով անտեսում է կանանց գոյության փաստը:

**Աբգարյան գերդաստան**

Ցուրա հայրիկ, ընդհատակյա մականունը՝ «Փեսաս ոսկի է»: Մայրիկիս ամուսինը, տարբեր տրամաչափի չորս աղջիկների հայր: Ընկերախմբի

ոգին է: Պայթյունավտանգ բնավորություն ունի: Նվիրված ընտանեսեր է: Հավատարիմ ընկեր:

Նադյա մայրիկ, սրտահույզ ու սիրող մայր: Հիանալի վազում է: Ընդունակ է վզակոթի դիպուկ հարվածով մեկընդմիշտ մարել աստիճանաբար սաստկացող ընդհարումը: Անխոնջ կերպով կատարելագործվում է:

Նարինե, ես եմ: Նիհար, բարձրահասակ, մեծքթանի: Փոխարենը ոտքիս չափսը մեծ է: Պոետի երազանք (համեստորեն):

Կարինե, արձագանքում է «Չինգիզ խան», «Արմագեդոն», «Ապոկալիպսիսն այսօր» անունները լսելիս: Ցուրա հայրիկն ու Նադյա մայրիկը մինչև հիմա գլխի չեն՝ որ մի մեղքի համար է իրենց նման երեխա բաժին ընկել:

Գայանե, գժվում է այն ամենի համար, ինչը կարելի է խցկել ռունգերը, ինչպես նաև ուսափոկով պայուսակների համար: Միամիտ, անչափ բարեսիրտ ու զգայուն երեխա է: Գերադասում է աղավաղել բառերը: Նույնիսկ վեց տարեկանում ասում է «ալյապոյլտ», «հեսանիվ» և «գշի մեկը»:

Սոնա, բոլորի սիրելին է: Անհավատալի համառ երեխա է: Կամակորություն անելու համար խելքն իրենը չէ: Ամենասիրած ուտելիքը եփած երշիկն է, մեկ էլ կանաչ սոխի կանաչ մասը: Ատելով ատում է կարմիր, փչովի ներքնակները:

«Հենրիետա», առհասարակ «կոպեկանոց»: Հոգևոր առումով առնվազն ցարական ոսկեդրամ: Միանգամայն անձնվեր, երբեք քեզ չի հակաճառի: Երկու հայրիկների ջանքերով մշտապես անախորժությունների մեջ է հայտնվում: Մե՛կ կովերի նախիր կմխրճվի, մե՛կ մահացու թռիչք կկատարի ճամփեզրի առվի մեջ: Ու այդ ամենը՝ առանց որևէ կշտամբանքի: Մեքենա չէ, տեղով ամեն ինչ ներող անվավոր հրեշտակ է:

Գլուխ 1

## Մանյունյան՝ գիտությունների մագիստրոս, կամ ինչպես սովորական գոտկացավը պատժից ազատեց

— Տա՞: Իսկ Դարվինը ո՞նց է մեռել:

Տան բռնեց սիրտը: Կտրուկ նստեց, ափլփելով գտավ ակնոցը, քնաթաթախ թարս դրեց ու ինչ-որ անհասկանալի պատասխան տվեց:

— Ի՞նչ,– Մանյունյան ձեռքի ափը դրեց ականջին ու առաջ եկավ:

— Ժամը քանի՞սն է:

— Առավոտվա վեցն է,– զրնգուն ձայնով զեկուցեց Մանյունյան, գիրքը հանեց թևատակից, ինչ-որ էջ բացեց ու խստապահանջ նայեց տատիկին:

Տան դժվարությամբ աչքերը բացեց, նայեց ժամացույցին:

— Մարիա՛, հո չե՞ս գժվել: Էսօր կիրակի է, ինչի՞ ես էսքան շուտ արթնացել:

Մանյան նեղացած քիթը ֆսսացրեց:

— Էդպես էլ ասեիր, որ չգիտես՝ Դարվինը ոնց է մեռել: Ի՞նչ ես միանգամից կիրակիից խոսում:

Տան հոգոց հանեց, ակնոցի դիրքը շտկեց, Մանյունյայից գիրքը խլեց ու աչքերը չռեց նկարազարդման վրա: Գրքի էջից Տային էր նայում հաստլիկ, կոծոծավոր մի դոդոշ:

— Էս ի՞նչ է:

— Թունավոր դոդոշ է: Բայց ես սա՛ չէի հարցնում: Ուղղակի գրքում սրա մասին պատմության մեջ նկար չկա: Գրված է՝ իբր մի իշամեղու խայթել է մի սարդի: Ու սարդը կաթվ…,– Մանյունյան կլկլացրեց «թ» տառի վրա, սրտնեղած խոժոռվեց, կոկորդը մաքրեց ու կրկին անցավ դժվարարտասանելի բառը հաղթահարելուն,– կաթվծարար եղավ:

— Կաթվածահա՞ր:

— Դե էդ, էլի… Ու սարդն ընկել է ուրեմն սատկածի պես: Թփի տակ: Ու չէր շնչում…

— Հա-հա-հա...

— Ի՞նչ ես ծիծաղում: Ոչ մի ծիծաղելի բան էլ չկա: Ընդհակառակը, ահավոր սարսափելի պատմություն է: Ու երբ էդ կրետն ուզել է սարդին իր բույն քարշ տալ, որ երեխաներին կերակրի, Դարվինն էդ պահին էլ նրան բռնել է:

— Պառկի՛ր կողքիս,– Տան մի կողմ քաշվեց, ծածկոցը մոտեցրեց, ձեռքով թփթփացրեց սավանին:

— Ոչ էլ կպառկեմ կողքիդ: Էլի կսկսեց ինձ կսմթել, իսկ ես խոսելու հավես ունեմ:

— Խոսք եմ տալիս՝ չեմ կսմթել:

— Երդվի՛ր:

— Երդվում եմ,– Տան մատները չռեց,– տեսնո՞ւմ ես՝ մատներս չեմ էլ խաչում:

Մանյունյան մի պահ փորձող հայացքով շամփրեց տատիկին, հետո գլխով արեց, մտավ ծածկոցի տակ ու բարձր շշնջոցով շարունակեց.

— Ասեմ՝ ինչ եմ հիմա մտածում: Հնարավոր չի՞, որ երբ Դարվինն էդ կրետին բերեց, ը՛… Դե, որտեղ ինքն էր ապրում: Իր տունը…

— Իր տուն:

— Հա դե, էլի, իր տունը:

— Իր տուն տարավ, ոչ թե իր տունը:

— Լավ, դե, դու էլ, Տա՛: Տուն տարավ էդ կրետին: Ուրեմն կրետը մի քիչ ապրեց իր վանդակում, հետո Դարվինը պատահաբար մատը մտցրեց վանդակը, որ փորփրեր, իսկ կրետը բռնեց ու խայթեց նրան: Ու նա մեռա՞վ:

— Կաթվծարար մեռա՞վ,– չդիմանալով Մանյայի ողբերգական հայացքին՝ դեմքը խրեց բարձի մեջ ու միայն իրեն հատուկ քրքջոցից պայթեց, հետն էլ հեծկլտալով ու ողբաձայն կանչեց,– վա՛յ, մամա ջան, էլ չեմ դիմանում:

Մանյունյան տատիկի ձեռքից բարկացած խլեց գիրքը, մահճակալից ցած սահեց ու ոտնամանները գցեց ոտքերը:

— Լրիվ հայրիկին ես քաշել: Հենց մի գիտական բան եմ ասում, տեղնուտեղը սկսում է հռհռալ: Ու ասում է՝ «վա՛յ, մամա ջան, էլ չեմ կարող»,– ծաղրանմանակեց նա: — Էլ ձեզ ոչ մի բան չեմ ասելու: Ավելի լավ է՝ Նարինեին պատմեմ: Երևի նա էլ չգիտի՝ Դարվինն ինչից է մեռել, բայց գոնե ասածիս վրա չի ծիծաղում:

— Բա էլ ի՞նչ է անում, որ չի ծիծաղում,– հռհռոցի երկու նոպայի արանքում վնգվնգաց Տան:

— Կողքիս նստած սուսուփուս նայում է: Այ թե ինչ: Էնպես որ գնացի իմ սենյակ: Իսկ դու մենակ-մենակ ծիծաղիր:

Մանյունյան քիթը ֆսսացրեց, գիշերանոցի շալվարը բարձրացրեց մինչև կուրծքը, շրջվեց և կատաղած ու հատու քայլերով դուրս եկավ սենյակից:

— Պահ-պահ: Նավաստու կուրծքն ասե՞մ, թե՞ հնդկահավի քամակը...— Մանյունյայի հետևից բղավեց Տան:

— Քահ-քահ... Նավաստու քամակը, հնդկահավի կուրծքը,– պարտքի տակ չմնաց Մանյունյան:

Տան գիշերանոցի թևքով սրբեց արցունքներն ու մի քիչ պառկած մնաց, որ ուշքի գա: Հետո վեր կացավ, ցրված մազերը կարճ հյուս արեց: Մոտեցավ պատուհանին ու օդանցքը բացեց: Սենյակը մի ակնթարթում լցվեց փետրվարյան սառն առավոտով. հալվող ձյան ու խոնավ, ուռած հողի սուր հոտ փչեց: Սառած այգաբացը վախվորած ոսկեզօծեց հեռավոր բլրի ուսը: Կռվարար տոնով ուշացած ծուղրուղու էին կանչում առավոտվա աքաղաղները:

— Լավ օր է լինելու,– որոշեց Տան:

Նա հագնվեց, անկողինը կարգի բերեց, մահճակալը ծածկեց ծանր, մգդակած ծածկոցով: Պահարանիկի գրքերն իրար վրա դարսեց, ուղղեց զարդասեղանի ցանցկեն անձեռոցիկը: Գոհ հայացքով նայեց սենյակին. մաս-մաքուր է: Կամացուկ ծածկեց դուռն ու գնաց թոռան հետ բանակցելու:

Մանյայի սենյակը Տայի ու Միշա քեռու սենյակների մեջտեղում էր: Միշա քեռու սենյակը միջանցքի ծայրում էր: Սենյակը մեծ, ապակեպատ պատշգամբ ուներ, որտեղ Միշա քեռին պահում էր իր ինժեներական տարբեր իրերը: Մի քանի լար, մետաղյա դետալներ ու վարդակներ կային սեղանի տակի ստվարաթղթե տուփում: Ամեն անգամ սենյակը հավաքելիս՝ Տան շատ էր ջղայնանում ու տուփը քարշ էր տալիս պատշգամբ, բայց մի երկու

օրից տուփն ինչ-որ կախարդանքով դարձյալ հայտնվում էր սենյակում: Ուղղակի Միշա քեռին պարբերաբար ինչ-ինչ գյուտեր էր անում, ներշնչված գծագրեր էր գծում ու տարօրինակ կառույցներ հավաքում, որոնք վերջում նման էին լինում պայթած «Դրուժբա» բենզասղոցի ջախջախված մասերի, դրա համար էլ էդ օգտակար տուփը միշտ պիտի ձեռքի տակ լիներ: Հնարավոր է, չէ՞, որ ոգեշնչումն այցելի գիշերվա ժամը երեքին, հո լարերի համար ցրտաշունչ պատշգամբ չե՞ս գնա: Չէ՞ որ պահեստամասերի՝ ձեռքի տակ լինելն ամենամեծ գիտական հայտնագործությունների գրավականն է:

Դրա պատճառով էլ իր ու շրջապատի նյարդերը խնայելու համար Տան որդուն ամենածայրի սենյակն ուղարկեց: Էդպես ավելի քիչ կնյարդայնանաս անվերջանալի արտադրական հնոտիքից, առանց որի որդիդ չի պատկերացնում իր կյանքը, հետն էլ նրան չես շեղի զանազան կարևոր հայտնագործություններից: Միշա քեռին գնահատում էր Տայի ինքնազոհողությունը, տանը ձգտում էր ձեռնպահ մնալ խելահեղ կոնստրուկտորական պոռթկումներից, իսկ նորաթուխ սարքավորումների աշխատանքը ստուգում էր հարազատ ռելեի գործարանի հետնաբակում: Շատ էր վշտանում, որ գործարանում փորձարկումների համար հատուկ առանձնացված շինություն չեն հատկացնում:

Բայց նա երբեմն անվերահսկելի ստեղծագործական էքստազի մեջ էր ընկնում: Նման պահերին աշխարհում ամեն ինչ մոռանում էր ու իր սարքավորումները տանը ստուգում: Երկու անգամ համարյա ոչինչ էլ չեղավ՝ խրոցակները կոտրվեցին, մի անգամ թեթև հրդեհ բռնկվեց, որը մեր անդադրում գյուտարարը մարեց սեփական նոր, բրդե շալվարով, մի անգամ էլ վարդակին միացրած սարքավորումն էնպիսի սահմռկեցուցիչ անդրաշխարհիկ ոռնոց արձակեց, որ մոտակա մի քանի հարյուր մետր շառավղով ինչքան կենդանի շունչ կար, սարսափից կուչ եկավ:

Մանյայի սենյակն ամենամեծն ու լուսավորն էր: Աջ կողմում մուգ փայտից լայն մահճակալն էր, սնարի մոտ՝ գրասեղանը: Պատին, բաց դարչնագույն ֆոնին, շոկոլադագույն ու մուգ կանաչ նախշերով մեծ գորգ էր կախված: Սենյակի անկյունում հին բազկաթոռն էր: Դռնից ձախ մեծ պահարանն էր, որտեղ ոչ միայն հագուստն էր պահվում, այլև պարբերաբար պահվում էին մենք, երբ ուզում էինք մեր՝ առանց այն էլ իրադարձություններով հարուստ կյանքին խորհրդավորության մշուշ հաղորդել: Պահարանում պահվում էինք, որ տեսնենք՝ մթության մեջ հնարավո՞ր է գուշակել միմյանց

— Լավ, գնամ խմոր անեմ, լավ մտածիր:

— Այ մարդ, դե, թողեք՝ քնեմ, էլի,– սենյակից գոռաց Միշա քեռին:

— Աղջիկդ է նազուտուզ անում:

— Հեչ էլ նազուտուզ չեմ անում,– անմիջապես գոռոաց Մանյունյան:

— Վերջ, գնացի: Հենց նեղացածությունդ անցնի, ցած իջիր: Կպատմեմ՝ ինչից է մեռել Դարվինը:

— Ինչի դու գիտե՞ս՝ ինչից է մեռել:

— Լավ գիտեմ:

— Ասա,– Մանյայի հետաքրքրասեր աչքը բանալու անցքից հետևում էր ամբողջ տարածքին:

Տան կռացավ ու նախքան թոռնուհու՝ դռնից հետ ցատկելը որսաց նրա գողունի հայացքը:

— Չեմ էլ ասի: Կասեմ, երբ դուրս կգաս:

— Շատ պետքս է,– բորբոքվեց Մանյունյան:

— Դե, ոնց կուզես,– ծիծաղեց Տան աստիճաններից իջնելով:

Խոհանոցում նախ միացրեց ռադիոն: Երջանիկ հաղորդավարը կերկերուն ձայնով պատմում էր՝ աշնանացանին ինչ փարթամորեն են ծիլ տվել մեր անծայրածիր հայրենիքի բոլոր դաշտերը, Տան էլ դժգոհ դեմքով բարկացած մեկնաբանում էր հաղորդավարի ամեն մի խոսքը: Այնուհետև, բոլիվիական Օրուրո դեպարտամենտի հանքափորների աղետալի վիճակի մասին ողբերգական նորությունների ձայնակցությամբ Տան խմորիչը տաք կաթով բացեց, մի քիչ աղ արեց ու թթխմորով ամանը դրեց տաքացուցիչին, որ խմորը շուտ բարձրանա: Մինչև խմորիչը կհասունանար, Տան վազեց հետնաբակ, հավերին կեր տվեց, կրեաը ջուր լցրեց: Չորս ձու վերցրեց, հինգերորդին ձեռք չտվեց, թողեց արկղում, որովհետև եթե բոլոր ձվերը վերցնես, հավերը ցրիվ կգան հավանոցում ու, որտեղ պատահի, ձու կածեն:

Սառած վազեց տուն, կաթնախառնուրդի մեջ երեք ձվի դեղնուց ջարդեց, մի ճաշի գդալ շաքարավազ, մի ճաշի գդալ հալած յուղ, կես բաժակ էլ թթվասեր լցրեց, ջրիկ խմոր արեց: Առանձին հարեց-փրփրացրեց ձվի սպիտակուցը, զգույշ ավելացրեց խմորին: Փայտե գդալով խառնեց, տաք ծածկոցով փաթաթեց, թողեց՝ հանգստանա: Կես տուփ կարագ հալեց, մի բաժակ լորենու մեղրով հարեց: Բլիթների վրա լցնելու համով խառնուրդ դարձավ: Հաստափոր, հախճապակե թեյնիկում թեյ թրմեց, ելակի մու-

ռաբա բացեց: Միշա քեռին մեղր չէր ուտում, քաղցրից միայն մուրաբա էր նախընտրում: Ինքնագոհ նստեց թեյ խմելու: Ականջ դրեց՝ վերևից ծըպտուն չէր լսվում:

«Մի գնամ, տեսնեմ՝ ինչ է անում, է՛»,– որոշեց Տան, թեյը վերջացրեց, բաժակը ողողեց ու, փորձելով չճռճռացնել փայտե աստիճանները, երկրորդ հարկ բարձրացավ: Անմիջապես աչքովն ընկավ խիտ, անհավասար տառերով խզբզած պաստառը: Տան քթարմատին ուղղեց ակնոցն ու մոտեցավ, որ նոր գրածներն ավելի լավ տեսնի: Մանյունյան, բնականաբար, իրեն արժանավայել էր պահել ու պաստառը նախշել էր հերթական հոգեպարար բովանդակությամբ կոչերով:

> «Մուտքը արքելվաց է բոլոր նրանց համար, ովքեր ծիծաղում են:
> Թաքավորական նավատորմի նավապետ, գիտության մագիստռոս, 1845 թ. թաքավորական ընկերակցության անդամ Մարիա Միխայլովնա Շացի սենյակ:
> Ծնդյան տարեթիվ. 1970 թվի նոյեմբերի 11:
> Մահվան տարեթիվ. մեռաց չի, ապրում է»:

Տան փռթկացրեց:

— Ձե՞ռ ես առնում,– տեղնուտեղը կռվի բռնվեց բանալու անցքը:

— Չէ, ի՞նչ ես ասում,– Տայի հազը բռնեց,– ծիծաղելու հավես չունեմ:

— Հավանո՞ւմ ես,– հանդարտվեց բանալու անցքը:

— Շատ եմ հավանում: 1845-ն ի՞նչ է նշանակում:

— Որտե՞ղ:

— Ցուցանակին: Գրել ես՝ «1845 թ. թագավորական ընկերակցության անդամ»:

— Ի՞նչ իմանամ, գրքից եմ արտագրել, ուղղակի անունս եմ ավելացրել: Ես արդեն թագավորական նավի նավապետ եմ: Ու մուտքդ էստեղ, միևնույն է, արգելված է:

— Բա որ թագավորական նավատորմի նավապետ ու գիտության մագիստրոս ես, ինչի՞ ես տառասխալներով արտագրել:

— Որտե՞ղ:

— Այ էստեղ ու էստեղ,– Տան մատը տնկեց պաստառի վրա: — Ու մեկ էլ էստեղ: Անձամբ երեք սխալ եմ գտել: Դուրս արի, որ ցույց տամ: